ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Սարիգյուղ, , sarigyugh.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 21-Ա

ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019թվականի մայիսի 7-ի թիվ 35-Ա որոշումը, որոշում եմ՝

1.Հաստատել Սարիգյուղ համայնքի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությունը:

2.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2010թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 46-Ա որոշումը

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՅՐԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

2019թ.
Մայիսի
13

գ.Սարիգյուղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Սարիգյուղ, , sarigyugh.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 22-Ա

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՎՈԼԵՅԲՈԼԻ<ՉԻՆԱՐԻ> ԹԻՄԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով ,հիմք ընդունելով համայնքի ավագանու 21.12.2018թվականի թիվ 70-Ն որոշման 5-րդ կետի <գ>ենթակետը և հիմք ընդունելով վոլեյբոլի թիմի երեխաների 06.05.2019 թվականի դիմումը, որոշում եմ՝

1.Համայնքի տրանսպորտային ծախսերից 15 000/տասնհինգ հազար/ դրամ հատկացնել որպես ճանապարհածախս վոլեյբոլի < Չինարի> թիմին՝ Դիլիջան քաղաքում կայացած մրցումներին մասնակցելու համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԵՅՐԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

2019թ. Մայիսի
16

գ.Սարիգյուղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Սարիգյուղ, , sarigyugh.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 23-Ա

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՎՈԼԵՅԲՈԼԻ<ՉԻՆԱՐԻ> ԹԻՄԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով հիմք ընդունելով համայնքի ավագանու 21.12.2018 թվականի թիվ 70-Ն որոշման 5-րդ կետի <գ> ենթակետը և հիմք ընդունելով վոլեյբոլի թիմի երեխաների 13.05.2019 թվականի դիմումը, որոշում եմ՝

1.Սոցիալական օգնություն դրամական արտահայտություն հոդվածից 10 000/տաս հազար/ դրամ հատկացնել վոլեյբոլի <Չինարի> թիմին՝ Դիլիջան քաղաքում կայացած մրցումներին մասնակցելու համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՅՐԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

2019թ. Մայիսի
16

գ.Սարիգյուղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Սարիգյուղ, , sarigyugh.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 24-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՍԱՄՍՈՆ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ/ԱՎՏՈՏՆԱԿ/ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետով,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և 912-Ն որոշումների պահանջները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով,որոշում եմ՝

1.Սարիգյուղ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման 27.1 քմ հողամասում Սամսոն Շահնազարյանի կողմից ինքնակամ կառուցված 27.1 քմ արտաքին մակերեսով /21.46 քմ ներքին մակերեսով/ կառույցը /ավտոտնակ/ համարել օրինական և ճանաչել համայնքային սեփականություն:

2.Սարիգյուղ համայնքի վարչական տարածքում գտնվող 11-057-0053-0006 ծածկագրի 27.1 քմ մակերեսով հողամասի և հողամասում առկա 27.1 քմ արտաքին մակերեսով շինությանը/ավտոտնակ/ տալ գ. Սարիգյուղ 2 փողոց թիվ 24/2 հասցեն:

3.Համայնքային սեփականություն ճանաչված օրինականացված ինքնակամ կառույցի պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել համայնքի հաշվին:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԵՅՐԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

2019 թ. Մայիսի
16

գ.Սարիգյուղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Սարիգյուղ, , sarigyugh.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 25-Ա

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 71/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ/ԱՆԱՍՆԱՇԵՆՔ/ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ԿԱՐԵՆ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ/ԱՆԱՍՆԱՇԵՆՔ/ԾԱԾԿԱԳԻՐ 11-057-0070-0004 ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել Սարիգյուղ գյուղ 4 փողոց 5 տան բնակիչ Կարեն Շահնազարյանը, համայնքի 1-ին փողոց 71/3 հացեում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող օրինական 0,14071 հա ընդհանուր մակերեսով հողամասում /ծածկագիր 11-057-0070-0004/ ինքնակամ կառուցված 330,0 քմ արտաքին մակերեսով շինության /անասնաշենք/ իրավական կարգավիճակի որոշման խնդրանքով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ կառուցված շինությունը /անասնաշենք/ բավարարում է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով սահմանված պայմանները,կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները,օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի առաջացնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2006թվականի թիվ912-Ն որոշման թիվ 13-րդ կետի <ա> ենթակետի պահանջներով,որոշում եմ՝

1.Ճանաչել օրինական Սարիգյուղ համայնքի 1-ին փողոց 71/3 հասցեում գտնվող շինության /անասնաշենք/ սեփականատեր Կարեն Շահնազարյանի սեփականության իրավունքով իրեն պատկանող օրինական 0.14071 հա ընդհանուր մակերեսով հողամասում /ծածկագիր 11-057-0070-0004/ինքնակամ կառուցված 330,0 քմ արտաքին մակերեսով շինությունը /անասնաշենք/:

2.Ինքնակամ կառուցված շինության /անասնաշենք/ համար համայնքային բյուջե մուծել 217800/երկու հարյուր տասնյոթ հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ, 1 քմ-ի համար՝ 660 /վեց հարյուր վաթսուն / ՀՀ դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՅՐԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

2019թ. Մայիսի
16

գ.Սարիգյուղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Սարիգյուղ, , sarigyugh.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 26-Ա

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ/ԱՐՏԱԴՐԱՄԱՍ/ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ԱՐԱՄԱԻՅԻՍ ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ/ԱՐՏԱԴՐԱՄԱՍ/ԾԱԾԿԱԳԻՐ 11-057-0106-0004 ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել Սարիգյուղ գյուղի 1-ին փողոց 40 հասցեի բնակիչ Արամայիս Ամիրխանյանը համայնքի 2-րդ փողոց թիվ 2/1 հասցեում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող օրինական 0,053536 հա ընդհանուր մակերեսով հողամասում /ծածկագիր 11-057-0106-0004/գտնվող պահեստին կից ինքնակամ կառուցված 145,37 քմ արտաքին մակերեսով շինության/արտադրամաս/ իրավական կարգավիճակի որոշման խնդրանքով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ կառուցված շինությունը /արտադրամաս/բավարարում է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188 -րդ հոդվածով սահմանված պայմանները,կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները,օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի առաջացնումքաղաքացիների կյանքին առողջությանը,կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2006թվականի թիվ 912-Ն որոշման թիվ 13-րդ կետի <ա>ենթակետի պահանջներով,որոշում եմ՝

1.Ճանաչել օրինական Սարիգյուղ համայնքի 2-րդ փողոց 2/1 հասցեում գտնվող պահեստին կից շինության /արտադրամաս/ սեփականատեր Արամայիս Ամիրխանյանի սեփականության իրավունքով իրեն պատկանող 0,053536 հա հողամասում/ծածկագիր 11-057-0106-0004/ ինքնակամ

կառուցված 145,37 քմ արտաքին մակերեսով /134,62քմ ներքին մակերեսով/ շինությունը /արտադրամաս/:

2.Ինքնակամ կառուցված շինության /արտադրամաս /համար համայնքային բյուջե մուծել 95944/իննսունհինգ հազար ինն հարյուր քառասունչորս/ ՀՀ դրամ,1 քմ -ի համար՝ 660/վեց հարյուր վաթսուն / ՀՀ դրամ:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՅՐԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

2019թ.
Մայիսի16

գ.Սարիգյուղ